

մէ ինծի համար փափաքելի փոխարէն
մը կ'ուզեմ, այսինքն, որ դուն ճշմա-
րիտ եղբայր ըլլաս, և դուն ալ հարա-
զատ մայր: Եւ փափաքիմ որ ամէն գրծ-
տութիւն վերցուի մեր մէջէն, և միա-
բան սիրով երջանիկ օրեր անցընենք:»
Եւսարու աս սրտաշարժ խօսքերէն
Եւերարդի և անոր մօրը սիրտը կակըզ-
ցաւ, և սիրոյ առհաւատչեայ համբոյրը
իրարու տալով՝ շնորհակալ եղան Եւսա-
րու որ այսպիսի ազնուական կերպով

վրէժ խնդրեց իրեն դէմ եղած ար-
համարհանացը:

Իայց անոնցմէ աւելի Եւսար ուրա-
խացաւ, ընտանեկան խաղաղութիւնը
տակնուվրայ ընող կիրք մը մէջերնէն
պակսած տեսնելով: Որչափ Եւե-
րարդը կը գտնուին եղբարց մէջ, և ա-
նոր հակառակ՝ որչափ սակաւագիւտ են
Եւսարու նման ազնուական սիրտ ունե-
ցողները:

ՍՈՒՆԻ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Ք

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Ո՛վ Յաք, ո՛վ Յաք:

Ցաւք իմ առաջի իմ են
յամենայն ժամ:

ՍԳՄ:

Առաջին դուք եւ յետին ի կիրս մարդոյ,
Դուք որ չըգայք բնաւ անընկեր մէն ըստ միոյ,
Օձեզ որ ընդ շիթս եւ ըստ շըթից ծըծեմք ի մարց,
Որ չարձակէք երբէք ըզսիրտս ի ճիրանաց,
Եւ ի բերե որդն յուղիղ տընկոց բունեալ ի մեզ,
Նոր ի նորոյ փորէք ի խոր վիրաց ի վերս,
Եւ ի նորուն բուծիք արիւն եւ ի շարաւք,
Ո՛վ ցաւք, ո՛վ ցաւք:

Իրոնաւորաց ամենայնի բըռնագոյն դուք,
Որ եւ գնոսա ի ձէնջ աղատըս ոչ թողուք.
Ոչ մորձ ի ձէնջ եւ ճիղմ հասակ, ոչ ալեղթ,
Սոր ոչ ըստինք, սիրուհւոյն ծոց ասպար անքոյթ.
Սիրտ յամենայն ձեզ ընդունակ գըտանին խորշ,
Եւ յամէն այտս՝ վարդ եւ շուշան խամրել ի գորշ.
Եւ յաչըս ցողք զոր հոսիցէք դուք յապաշաւք,
Ո՛վ ցաւք, ո՛վ ցաւք:

Յոյց սասանիմք՝ այդ ձեզ ախորժ են տեսարանք,
Շօվք ալեկոծք, շանդք եւ մըրրիկք սեաւ գերեզմանք.
Հըրդէհք, աղէտք անբաւ, ախտք, սուր, հեղեղք արեանց,
Սասանութիւնք տանց եւ սըրտից, ընկերութեանց,
Ենդ ձեզ յարձակ ասպարիզիդ խաղայք նազէք,
Վըպիտք ի դէմն, ժըմտել միայն թէ գիտիցէք,
Ուր զոր չընէքդ եւ չըընջէք՝ լալիւն բընաւք,
Ո՛վ ցաւք, ո՛վ ցաւք:

Ի կռիւնք կոծոյ իբր ի հրաւեր փողոյ մարտիկ
Օտրլմնութ թափիք գունդ արարեալ դուք ի մարդիկ .
Հօր հառաչանք , մայրենի ճիչ ծընելասէր ,
Հարսին մատաղ ողբք , եւ որբոց ջայլք կարեւէր ,
Ձեր ներդաշնակք ախորժականք են բիւրալար ,
Եւ յարտասուս ազգ ազգ բըբայ բայց ցանգ ի դառն
Յափուցանէք ըզտապ եւ ցանգ տապեալ զընայք ,
Ո՛վ ցաւք , ո՛վ ցաւք :

Սայելեսջիք : — Իցէ՛ ձեզ խոչ , եւ ո՞ր երկիւղ ,
Լնագորոյն զի ձեր սպառին հաճոյք կանուխ .
Յորչափ եւ ուր սիրտք՝ համադամք կան ձեզ պատրաստ ,
Եւ բաժակիդ յորդեն աղբերք յամէն երաստ .
Յոր դուք հըպիք սարսափ և հոյն դրոշմի համայն ,
Ըզկիրս տիրող շիջուցանէք եւ զնոցին ձայն .
Դէմք ի դալուկն , ճակատ կնճռեալ , անդամք ի սեաւք . . .
Ո՛վ ցաւք , ո՛վ ցաւք :

Ը՛հ ձեր պատէ զերկիր համայն սոսկմամբ ի գոյժ ,
Ճակատագրեալք ի Սահ ըզձեր չառնուցումք տոյժ ,
Որ յահաւոր յայդ բան՝ բընաւք պարունակիք .
Կարապետել զնորին գալուստ զաշխարհ լըցիք .
Սիրտք հողմաւար դոյզն եղեգունք ի գնացս ուղխից՝
Յայդքան հեղեղս հանդուրժեսցէ՛ . երբ , եւ քանից .
Կոխէք՝ սուզէք ի վիհսդ ի գլոր՝ յորձանս զերդ նաւք ,
Ո՛վ ցաւք , ո՛վ ցաւք :

Ո՛վ ցաւք , ո՛վ ցաւք երկրաւորացս ողջոյն տարերք ,
Որ զխանձարուրս եւ զգագաղաց օթոցս հիւսէք .
Որ զարքունեան եւ զտուարածին շարժէք մական ,
Եւ զթինդ սըրտից փոխէք ի սառն մահական .
Օբազումն առնէք դուք ցիր , զերկուս՝ անոք եւ մէն ,
Եւ ի մահուն վառէք ի ջահս ըզգուարթ հիմէն .
Ի հեշտս ի յոյս մեր ձեր հիմունք են եւ սերմանք ,
Ո՛վ ցաւք , ո՛վ ցաւք :

Յաւք ի մարմնոց , որով զօդիմքս ընդ աշխարհի ,
Յաւք յանյաջող ելից , բսկիզբն էր մինչ բարի .
Յաւք ի նըժդեհ օտարութեան , ցաւք՝ հայրենեաց ,
Յաւք ի վատթար , ցաւք ի գործոց բըխեալ լաւաց ,
Յաւք ի բախտէն , ցաւք ի զըրկման , ցաւք ի տեսոյ ,
Յաւք մինչ դաժան շարժին նայեացք փոխան գըթոյ ,
Եւ ցաւք , երկինք , դառնագոյն , ցաւք ի սիրելեաց . . .
Ո՛հ ցաւք . . . վահ սիրտք սիրազգեաց :